№ 34 ԹԻՖԼԻՍԻ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 16 — 1895 — ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՖԼԻՍԻ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 16 № 34

«ՉԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ, կէս տարւանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 րուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՒԻՂ

«ՉԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չն 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամին լեղուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Զ Գ

Հարկաւոր է «Չաւիղի» Խմբագրութեան համար մի լաւ գրաշար (աւելի Հայերէն լեզւի) և մի լաւ տպագրիչ արագատիպ մամուլի համար։ Պայմանները հաղորդել։ Հասցէ՝ «Չաւիղի» խմբագրութեան վրայ։

ԲՈՂՈՔԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Ցետ նայենք.—ՆՈՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կամաւ կուրութիւն. Երկու հարցմունք.—Նամակ Թէհրանից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր անկարգութիւններ Գ.ճեմարանում։

ՑԵՏ ՆԱՅԵՆՔ

II

Ողքան վտանգաւոր է, երբ մի բարձր, մրբազան գաղափար ըմբռնվում է թիւր, այլանդակ կերպով։ Աւելի լաւ է այդ տեսակ գաղափարը չտարածւի, քան թէ ներմուծւի այլայլած՝ այլասեռած դէմքով։

Սակայն ինչ է նշանակում այն աչքի զարնուող երևոյթը, որ ամբողջ հայ ազգը տրամադրութիւն էր ցոյց տալիս խոտաճարակ դառնալ, քարանձաւները մտնել. որի օրինակը նոյն իսկ ազգի այրապետներն ու թագաւորներն էին ցոյց տալիս։

Մեր կարծիքով դա շատ մեծ բան է ցոյց տալիս, եթէ հարցի վրայ թափանցող աչքով նայինք։ Դա նշանակում է, որ հայերը տասը օրինակին ուզում էին լիովին նմանւել. դա նշանակում է թէ նրանցից իւրաքանչիւրն ուզում էր նաղվրեցի դառնալ. դա ցոյց է տալիս թէ սրբոյն անկեղծ, ամուր որոշ, բուռն զգացմունքով արտայայտելու գիտէին հայերն իրենց մէջ տարածւած վեհ գաղափարի ոգին. դա նշանակում է թէ մրցման առաջինը լինելու ոգին սաստիկ մեծ էր հայերի մէջ. դա ցոյց է տալիս թէ հայերը կենսաւնակ ազգ էին, դա ցոյց է տալիս վերջապէս, որ եթէ մի ուրիշ վսեմ գաղափար տարածւէր նրանց մէջ, ապա նոյն անվեհերութեամբ իրենց գլուխը գրաւ կը դնէին յանուն մեծ գաղափարի, ինչպէս քրիստոնէական վսեմ վարդապետութեան համար, որն, աւաղ, խանձարուրված մնաւ հայերի մէջ։ Ահա թէ ի՛նչ միտք ունի այդ հանրական երևոյթը։ Այդպէս ենք ըմբռնում Տրդատի գահազրկութիւնը. այդպէս ենք ըմբռնում այն պատմական երևոյթի միտքը, որ ահարկու թագաւորը ծնրադրութիւններ է անում երեսը տափն է քսում, հաւատացած լինելով, թէ այդ տեսակ ուղղութիւնն աւելի բարձր է, քան թէ՝ ազգի թշնամիներին հալածելը, քան թէ՝ իրեն հաւատացած ժողովրդի պատւի և ստացուածքի մասին խորհելը։ Ինչ անէր խեղճ Տրդատը. նրան հասկացրել էին թէ՝ «ունայնութիւն ունայնութեանց՝ ամենայն ինչ ունայն է...»—Ի՞նչ անէր պատկառելի, պաշտելի, բայց յանուն թիւր մեկնած գաղափարի խղճացած՝ փշրւած թագաւորը, երբ ամբողջ քրիստոնեայ աշխարհը ուզում էր աղօթքով ու ծոմապահութեամբ կնքել իր հոդածինը։

Մենք կարող ենք մատնացոյց անել այդ երևոյթի կործանիչ՝ աւերիչ պատճառը և այն էլ մի երկու բառով՝—տգիտութիւն, մտքի խաւարը։—Մարդուս միտքը երբ խաւարում է, նա այլևս ոչ իր գլխի տէրն է և ոչ իր խղճմտանքի ղեկավարը։ Խաւար միտքն անցանկ ալգու նման է, ուր ով ասես արձակ համարձակ ել ու մուտ կարող է անել, ըստ որում՝ խաւար միտքը ոչ իր ընդունածը գիտէ և ոչ՝ բաց թողածը։ Խաւար մտքի մէջ ինչ ասես կարող ես սեղաւորել և՝ ինչ ասես՝ վերցնել, որովհետև նրա տէրն աչքեր չունի, բան չի տեսնում։

Եթէ անցեալ հայերին մեղադրելու լինենք, ապա ժամանակակից և յետնորդ դարերի հոգևորականութեան ինչ ասենք, որ մ ցման շաւղով զառանցանքների աշխարհն է դուրս եկել։

Պապականութիւնը օրինակ. Սառցէ արեգակի նման ամբողջ 16 դար սառցակապ արաւ ամբողջ արևմտեան աշխարհը, և ինչ յիմարութիւններ ասես, որ այդտեղի հոգևորականների բե անհնարին է ասել։ Օրինակ՝ Սուրբ Հոգին Աստուածն է, Աստուածն էլ Հայր է, Հայրն էլ Աստուած է, Աստուածն էլ Որդի է, Որդին էլ Աստուած է, Աստուածն էլ Սուրբ Հոգի է, Սուրբ Հոգին էլ Աստուած է, և այլն և այլն։ Ասում են՝ Աստուած մի

հին աշխարհը:

Անցեալի պատմութիւնը, սակայն, նրա համար չէ որ պատմական հերոսներից մէկին գովելով մի ւրիշին պարսաւելով վերջացնենք մեր հետազօտութիւնը. այլ նրա համար է, որ պարսաւելին այսօր չը շարունակենք. խաւարից փախչելով՝ դիմենք դէպի լոյսը, որի ազդեցութեան տակ ամեն ինչ կեանք ստանալով՝ աճում, զարգանում է. որի մէջ ամեն բան իր բնական գոյնովն է հանդէս գալիս:

Ա. Ա.

Թիֆլիս (Պրոյոմ Կիւսպեան)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՄՈՒՆՔ

—

1) Թիֆլիսի «Արձագանգ» լրագրին.— Ինչ եղաւ ձեր հաւաքած փողը Գէօկչայ գաւառի Ղալագէ գիւղի հրկիզեալների համար՝ 1893 թուին, որից միայն 1500 րուբլի Մոսկվայից էր եկել: Ինչ արիք այդ փողը, ո՞րտեղ ուղարկեցիք, ինչ՞ բանի համար գործածեցիք:

2) Թիֆլիսի «Նոր-Դար» թերթին.—Ինչ եղաւ Խաչատուր Աբովեանցի արձանի համար ձեր հաւաքած փողերը: Ո՞ւր է արձանը կամ ո՞ւր փողը:

—

Այս հարցերին հարկաւոր է պատասխանել, եթէ երկու թերթերը չեն կամենալ արատաւորել իրենց միանգամ ևս: Ժամանակ ենք տալիս մինչև 1896 թիւ յունվար ամիսը և այս համարից մի մի օրինակ, շատ ապահով միջոցով, ուղարկում ենք վերոյիշեալ թերթերին և ապասում նրանց տալիք բացատրութեան:

Վ. Կ.

ԿԱՄԱՒ ԿՈՒՐՈՒԹԻՒՆ

—

Հայատեաց պրօֆէսօր Վամբերին իր «Հայերի պահանջները» յօդուածի մէջ բաղմաթիւ սուտ ու շինծու զրպարտութիւններ բարդելով խեղճ հայ ազգի գլխին՝ անգիտակցաբար մի քանի ճշմարտութիւններ է մատնանիշ անում. օրինակ. ասում է թէ հայերը աւելի են պահել ասիական ընտանութիւնը, քան Փ. Ասիայի այլ քրիստոնեաները, թէ նրանք մահմետական ցեղերով շրջապատուածք լինելու շնորհիւ՝ մշտապէս դատվում են ասիական կուլտուրայի ազդեցութեան տակ, և ետ են ւրբ պակաս քաղաքակրթութիւնից, և թէ նրանց չի կարելի համեմատել իսկ յոյնի և բօլղարի հետ...

Այս նկատողութեանը ճշմարտանման տասցի, որովհետև պրօֆէսօրի յօդուածին առաջնորդող տենդենցիան նրան թոյլ չի տւել երևան հանել իսկական ճշմարտութիւնը: Անմտութիւն է հային յետամնաց և տգէտ ասիական ժողովուրդ համարել՝ հիմնուած այն հանգամանքի վրայ, որ հայը դեռ պահպանում է մի քանի նախապաշարմունքներ, ընտանիքի նահապետական կազմակերպութիւնը և մի քանի ասիական վատ սովորութիւններ... Չէ որ հէնց նոյն ինքն գիտնականը խոստովանում է Ասիան ճանաչողների հետ՝ թէ հայը ունի լուրջ և փայլուն յատկութիւններ, սակայն կազկանգուած է և չի կարողացել շփուել Եւրոպայի հետ ու առաւել զարգացնել այդ թանկագին ընդունակութիւնները,...

Մի կողմ թողած այդ, մենք տեսնում ենք, որ մասամբ իրաւացի է այդ երկրորդ նկատողութիւն՝ թէ հայը պահպանել է մի քանի ասիական վատ յատկութիւններ, որոնք պատիւ չեն բերում եւրոպական քաղաքակրթութեան ձգտող մի ազգի: Ո՞ւմ չէ յայտնի, որ ասիացու կամ արևելցու բնութեան յատկանիշներից մէկն է նաև կամաւ կուրութիւնը. այսինքն ամեն ժամ ամեն վայրկեան, իր ողջ կեանքում տեսնել չարիք, վատութիւն, անաղնը ւութիւն, սակայն աչքերը փակել և չը տեսած ձևանալ. անդադար լսել իր շուրջը, իր դլխին կատարուղ անարդարութիւնը, սակայն ականջ խցել ու չը լսած ձևանալ. տանջւել մտքի և մարմնի բռնակալի ձեռքին, սակայն խեղդել իր զգացմունքները և անզգայ ձևանալ ևայլն:

Հայը՝ ոկսած իր քաղաքական կեանքի անկումից՝ դարերի ընթացքում, մի կողմից վայրենի բռնակալների տանջանքի, մարակի, միւս կողմից—հայ կղերապետութեան ճմլեցնող կոյր հնազանդութեան նէյնիմների ազդեցութեան տակ՝ սովորեց վիզ ճկել անագորոյն բաղդի անարդար հարուածների առաջ. յարմարւեց անձրեւ լ բուութեան բոլոր խաղերին և իւրացրեց իշխող անկիրթ տարրերի վատ յատկութիւններից մի քանիսը, որոնցից է և կամաւ կուրութիւնը: Այս արատը մինչև այժմ էլ աչքի զարնող ոյժով արտայայտվում է հայ ժողովրդի այն խմբերի մէջն իսկ, որոնք արդէն ազատւած են ասիական կապանքներից:

Վերցրէք մեր հասարակական կեանքի բոլոր խաւերը. դիտեցէք և առանց խոշորացոյցի և ակնոցի էլ՝ կը նկատէք այդ վերքը ամեն տեղ:

Օրինակ կ'ուզէք—ահաւասիկ գիւղական կեանքը. ժողովուրդը ստրո կ վաշխառու աղալի, տանուտէրի և գզրի ձեռին, գիտէ նրանց անիրաւութիւնը և իր արդարութիւնը, բայց լռում է—ինչո՞ւ...

Քաղաքի կեանքը. ահա ձեզ բազմաթիւ ազգօգուտ և հանրօգուտ հաստատութիւններ և հիմնարկութիւններ—խաղալիք տգէտ աղաների ձեռին, որոնք կլանում են ժողովրդի հաւատարմութեան արդիւնքը...

Նայեցէք հոգևորականութեան արարքներին: Մեր բոլոր կրթական հիմնարկութիւնները ենթակայ են տգէտ կղերի ամենահրէշաւոր ներկայացուցիչների կամայականութեան. նրանք հալածում են արժանաւորներին, առաջ քաշում անարժաններին. ինչ է ճեմարանի և թեմական դպրոցների վիճակը. դեռ մի կողմ թողնենք ծխականները...

Ժողովուրդը տանջվում է տգէտ քահանաների վատթար ներեսութիւններից, սակայն անխօս դրաստի նման լռութիւնը դեմ է արիլ և անմռունչ տանում է տանջանքը:

Կղերականութիւնը՝ որ իր գոյութեան ընթացքում ամենաուժ խոչնդոտ է է հանդիսացել ընդ. աշխ. հասարակական կեանքի աղատ զարգացմանը, պարծանքով իր շնորհքին է վերագրում հայի սուր և սնվալել կեանքի յարատևութիւնը՝ հետևեցնելով ըրանից, որ հայ ազգը իր առաջ երախտապարտ է, նրա սրբազան պարտականութիւնն է ձրիաբար խնամել կղերականութեան:

Քանիցս նրա պետերը տոպրակն ուսին ընկել են գաղաքից—քաղաք, գիւղից—գիւղ և դիմել են ազգի առատաձեռնութեանը, պահանջել են ոսկի, փառք, պատիւ, գոփնիք և անլռելի կեցցէները... չը նայած որ իրենց անդործութեամբ մեռցրել են նաև ազգային կեանքի բոլոր գործօնները:

Ազգը տեսնում, զգում է այդ ամենը, բայց լռում է և շարունակում յաղթական կամարներ կապել, գոփնի հիւսել և նրանց հանդիպել ոսկու քսակը բաց արած, անհամ կեցցէներին պատրաստ... առանց միանգամից—միանգամ հաշիւ պահանջելու իր տւած հարիւր հազարաւորների գործադրութեան տեղի, ժամանակի և եղանակի մասին. կամաւոր կուրութիւն չէ, ապա ինչ է...

Այդ տեսակ վերքերն անթիւ են, մեզնից իւրաքանչիւրը տասնեակ անգամ նկատել է. բայց ագիտաբար, կեղծ ազդասիրութեամբ, ծածկում է թէ իրենից և թէ օտարից, կամաւ կուրանում է: Սխալ ուղղութիւն է դա, վերքը նեխելուց յետոյ էլ չի կարելի բուժել և կորուստը անխուսափելի կը լինի:

Դ. Տ. Զ.

ՆԱՄԱԿ ԹԻՀՐԱՆԻՑ

—

15 սեպտ. 95

Մէկ լուր որ զուրկ չէ կարևորութիւնից դեռ չի հաղորդել «Շաւիղի» ընթերցողներին ի գիտութիւն. ուստի

---

*) Այս անկարդութեան մասին չուտով կը տպագրենք Լևոն վար. Խոջայեանի վերջին՝ շատ հետաքրքիր՝ նամակը:

Ե. Խ.

արդէն պատրաստութիւն է լինում տեսած՝ պատիւրելով ընակարան և ճաշ: Յաջորդ օրը նրանցից մեծ մասը տեղաւորվում են քաղաքացոց մօտ խումբ—խումբ. Երևանի վաճառականներից հինգ հոգու մի պատգամաւորութիւն է գնում Էջմիածին, ներկայանում Խրիմեանին և խնդրում որ մի կերպ անեն, խղճան փորրիկ սաներին և չը ցրեն այդ ձիւն---ձմեռին, մի մասին յետ ընդունեն ճեմարան, մի մասին էլ Երևան տեղ տան: Խրիմեանը համաձայնում է և խօսք է տալիս. սակայն երբ Կիւրեղին յայտնում են Երևանում Վահափառի խոստումը, նա պատասխանում է, որ իրեն ոչինչ կարգադրութիւն չէ արւած: Այսպիսով հայոց հոդեվարկը փակում է այս խնդիրն էլ և խնդրում, «որ ալ խօսք չլինեն»:

Երևանցիք նպաստներ տալով չքաւորներին, բոլորին էլ ճանապարհ են գցում իրենց հայրենիքները. ուստի նրանք արժանի կն անկեղծ շնորհակալութիւնների:

Սաների հետ ճեմարանից հրաժարեցվում են նաև երկու ուսուցիչ և երկու վերակացու, որոնք աշակերտների արդար բողոքին համակրելու յանդգնութիւնն են ունեցել: *)

Մի ընդհանուր հայեացք ձգելով ճեմարանի 20-ամեայ գոյութեան ամբողջ պատմութեան վրայ, տեսնում ենք, որ այդտեղ անպակաս են եղել վերոյիշեալ բոլոր անկարգութիւնները. քննելով դրանց բոլորի բուն պատճառը, գտնում ենք մի աղբիւրի մէջ: Ճեմարանի սաների արտունչներն ու բողոքները յառաջացել են այն ճնշող ուղղութեան բռնութիւնից, որին հետևել են ամենայն ճիգ ու ջանքով Նահապետեանը և իր հետևորդները. 1891 թ. և 1893 թ. Զեկուցումների մէջ այդ սպանիչ ուղղութեան համառօտ, բայց ամփոփ նկարագիրն է արւած:

Առաջին մեծ խռովութիւնը եղել է Նահապետեանի առաջին տեսչութեան (ճեմարանում) օրով, երբ դեռ աշխարհական էր և բողոքողները նրան ծեծելով հեռացան: Երկրորդ խռովութեան ժամանակ արդէն հոգևորական էր. 1891 թ. նա երևանից ժանդարմների գունդ բերեց, որպէսզի ճեմարանի մէջ իր երևակայած ապստամբութիւնը ճնշել տայ. ուսանողները խոհեմութեամբ հեռացան. Նահապետեանի դիմակը պատուեց և Մակարի օրով պաշտօնանկ եղաւ: Սրբազան Երեմիա եպիսկոպոսի տեղակալութեան օրով, ճեմարանը խաղաղ էր նախ Սարգիս, ապա Ս. Սեարակեան եպիսկոպոսների տեսչութեամբ: Երկրորդ խռովութիւնը տեղի ունեցաւ Խրիմեանի գալուց յետոյ, երբ ճեմարանի վարչութիւնը նորանոր փոփոխութիւններ կրեց: 2ը նայած որ 94 թվի մայիսին դուրս եկող 22 ուսանողները զեկուցման մէջ զղուշացրել էին Վեհափառին, սակայն անօգուտ. ուշադրութիւն դարձնող չեղաւ և նոյն թուականի Նոյեմբերի վերջերում, տեղի ունեցաւ ճեմարանի խայտառակութիւնների դլուխ գործոցը:

Ընթերցողն անշուշտ զարմանալու է տեսնելով այս միանման երևոյթների կրկնութիւնը. «Ե՞րբ արդեօք կը դադարեն ճեմարանի սաներին արտաքսելուց»: Այդ հարցի պատասխանը արդէն կը դանէք թէ 1891 թ. և թէ 1894 թ. ուսանողների ներկայացրած Զեկուցումների մէջ, ուր ասւած է. «ճեմարանի խաղաղութիւնը այն ժամանակ միայն ապահովւած կը լինի, երբ Նահապետները իրենց նեխած ուղղութեամբ կարտաքսուն ճեմարանից...»: Այդ խօսքերի հաստատութիւնն էք կամենում—ամբողջ ճեմարանի պատմութիւնը: Աւելի քարմ ապացոյց էք կամենում—ահաւասիկ դեռ հազիւ կէս տարի անցած, տեսուչ Կոստանեանի ծեծելուց, 1895 թ. ւականի նոյեմբեր ևս ճեմարանից արձակւեցան 20 աշակերտներ, որոնք նոյնպէս «խմորւած» կոչմանն արժանացել են...

Այս բոլորից եզրակացվում է, որ Նահապետեանների ամբողջ գործունէութիւնը կայանում է ինքնաճանաչ և աղատ խղճի տէր աշակերտներ վռնդելում, կամ թէ չէ նրանց վարկը կոտրելում՝ մարմնաւոր իշխանութեան աչքում...:

Եւ դրանից յետոյ, սպասել որ Էջմիածնի Գէորգեան ճեմարանը տար աղգին կանոնաւոր մարդիկ---դա կը լինէր մի հրաշք:

Դ. Տէր Զաքարեան.

աճապարում եմ այդ պակասը լրացնել։

Դա մի ինչ որ խաչագողի խնդիր է, որ առաջի անգամ լույս է ընկել Թէհրանում։

Վերջին օրերս մէկ հատիկ, մէջահասակ, շէկ և լիքը կլոր մօրուքով, կլոր դէմքով և ձախ ոտքից կաղող մի մարդ ներկայանում է փոխանորդ հօր և Ֆըրնուզի Նիկողայոս եպիսկոպոս Դաւթեանից կնքւած մէկ թուղթ ներկայացնելով, յայտնում է որ նրա եղբայրն է, տարագիր՝ Հայաստանում տեղի ունեցած զանազան անցքերի պատճառով և որ Տաճկաստանի զանազան քաղաքներից՝ Եգիպտոս և այդտեղից Բաղդատի և Քիրմանշահի վրայով անցնելով գալիս է Թէհրան։ Որպէս մէկ եպիսկոպոսի եղբօր, պատւիրվում է փոխանորդի կողմից լաւ ընդունելութիւն անել նրան։ Սակայն երկու նորեկ հայ վաճառականներ մի կիրակի եկեղեցի գալով, տեսնում են նրան և փոխանորդին յայտարարում որ նրան շատ լաւ ճանաչում են որպէս կաթոլիկ։

Քննութիւնը և ձեռք բերւած թղթերը ցոյց են տալիս հետևեալ արդիւնքները 1) երկու անցագրեր, մէկը պարսկական և միւսը տաճկական և մէկ յոյն վաճառականի նրան տւած վկայականը հաստատում են նրա, ուրմեցի, ասորի և կաթոլիկ Դիմետրի Պետրո լինելը, մինչ դեռ Պարսկաստանում զանազան տեղեր իրեն կոչել էր տւել երբեմն Կարապետ, երբեմն Դաւիթ երբեմն Սարգսաւագ և այլն։ (եկեղեցական արարողութեանց, մանաւանդ ժամասացութեան մէջ շատ հմուտ է) 2) Ն. Ջուղայի քէշագխուդայից, Յովհաննէս Մուրատեան կաթոլիկ գերապայծառից և առաջ. խորհրդարանի անդամ տէր Մինասից ստորագրւած մէկ թուղթ հաստատում է որ Բուշիրից՝ Ն. Ջուղայ և գիւղերը անցնելը այնտեղ գողութիւններ և շահատակութիւններ անելը։ 3) նրա մօտ գտնւած Ն. Ջուղայի նախկին առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսի, թղթի վրայ գարկւած մէկ կնիքը, նոր ձեռնադրեալ տէր Գրիգոր անունով մի քահանայից վկայականը և այստեղի վիճակաւոր քահանայից ևս մէկ փարաջա ուզելը՝ հաստատում են նրա կատարեալ խաչագող և կնիքներ կեղծող լինելը։ 4) Այդ արդիւնքները ձեռք բերելուց յետոյ երբ ուզում են ձերբակալել և յանձնել կառավարութեան, նա՝ փոխանորդի և ծառաների վրա դանակ քաշելը և սպառնալը թէ երկու վարդապետ արդէն սպանել և երրորդն էլ կըսպանէ, հաստատում են և նրա մարդասպան լինելը։ Ինչ և է, յաջողվում է նրան ազատել խոյս տալ փողոց և դռան թէ ինքը մահմետականացել է և ուզում են ձերբակալել. պարսիկ ամբոխը տանում է նրան կրօնապետի մօտ՝ որը մերժում է նրան մահմետական ընդունել։ Քանի օրից յետոյ յաջողվում է նրան մի քանի հայերի կրկին խաբել և իրեն քրիստոնեայ ձևացնել, որոնք մի քանի թուման հաւաքում տալիս են նրան և մօրուքը ածիլելով՝ ճանապարհում դէպի Ռաշտ։ Ուստի զգուշացնում ենք Ղազվինի, Ռաշտի և ամեն այլ քաղաքների հայերին հեռու պահել իրենց այդ խաչագողից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նորէն մի մատնիչ սպանւել է Կ. Պոլսում. նա կոչվում է եղել Համբարձում Ուղուրլեան և յայտնի է եղել Եօզղատի, Ամասիոյ և Մարզւանի կողմերում արած մատնութիւններով։ Կ, Պոլսում գրաքննութեան տեսանի մէջ պաշտօն է վարում եղել։ Եղբայրն էլ մատնիչ է. իսկ մայրը լրտես տների մէջ։ Մի ամբողջ ընտանիք մատնիչների։ Մատնիչը սպանւել է դաշոյնով և օրը ցերկով՝ փողոց մէջ։ Տեսնենք այժմ հերթը որինն է։

—

«Տարազը» հաղորդում է որ թիֆլիզով անցան Թէհրան գնալու համար մի քանի ռուս ինժիներներ, որոնք Թէհրանից Թավրէզ շինելիք երկաթուղու յատակագիծն են պատրաստելու և ուրիշ նախապատրաստութիւնները հոգալու։

—

Կամախի կոտորածի նկարագրութիւնն Երզնկայի խառն ժողովի տեղեկագրով, որ ուղղած է Կ. Պոլսի պատրիարքին, գտնվում է «Մշակ» № 95-ի մէջ։ Ցաւում ենք որ, մեզնից անկախ պատճառներով, մեզ անհնար է այդ տեղեկագիրը արտատպել։

—

Մեզ հաղորդում են որ Հալկ. դպրոցի համար գտնել է Կովկասում վարժապետ և վարժուհի, որոնք անշուշտ շուտով կը հասնեն Թէհրան։ Ուրախ ենք որ դպրոցը պիտի սկսի նորից կարգի ընկնել և ուսումը վերսկսել։

—

Լրագիրները հաղորդում են, որ Բագուի հարուստ դրամատէր Առաքել Ծատուրեանը մի շատ չքեղ հացկերոյթ է տւել Լոնդոնում բոլոր այն Անգլիայի միլիորդներին և միլեդիներին, որոնք բարեհաճում են երբեմն ճառեր արտասանել (միայն ճառերը) յօգուտ հայերի։ «Տարազը» ասում է որ Առաքել ապերի տւած հացկերոյթի վատնած դրամներով 17 օր կարելի էր կշտացնել Հայաստանի բոլոր քաղցածներին։ Այդպէս է ահա հայ անամօթ աղան կամ դրամատէրը. Առաքել ապօր նման ամիս «բարեգործները» դադանից աւելին խօ չէին կարող անել։ Ընթերցողը անշուշտ լիշում է որ այս միևնոյն Առաքել ապերը, անցեալ նոյեմբերին, երբ Սասունի կոտորածը նոր էր եղել և ամեն կողմից փոթորիկ էին դնում տառապեալներին՝ այդ հարուստ ապերը, Էջմիածնի սպրտաբոյծ վարդապետներին նւէր էր տալիս 5000 րուբլի փող...

—

«Մշակը» յայտնում է որ Ռաշտի Ա. ղաւել աղայից ստացել է 10 րուբլի ողորմութիւն՝ Ղ. Աղայեանցի համար։ Տեսէք թէ որքան ընկել է մեր թշւառ գրողը, որ հանդուրժում է ընդունել Աղաւելի պէս անձերից իրեն ուղղւած կոպէկները։ Առանց գրգռւելու չէ կարելի աչքի առջև բերել պ. Աղայեանի այդ աստիճան խոնարհութիւնը։ Մինթէ քաջութիւն չունի անօթութիւնից մեռնել՝ քան հաւաքել գոնագան աղաներից դէպի իրեն շպրտւած կոպէկները, որոնք փշրանքներն են այդ հարուստ ամիրաների սեղանների...

—

Կ. Պոլսի մէջ հոգեհանդիստ է կատարւել Սասունի կոտորեալների համար ամեն եկեղեցիներում, հրամանով Իզմիրլեան ս. պատրիարքի։

—

«Daily News» լրագիրը հաղորդում է որ «Լորդ Սոլսբիւրին յայտնել է թէ Կ. Պոլսի անգլ. դեսպանը ստացել է հետևեալ տեղեկութիւնները։ «Փոխ հիւպատոս Համֆսօն այցելել է Սասունի գիւղերը և սկիզբ է դրել շինութիւնների վերականգնելուն։ Միսիօնարները բժշանում էին ուտեստ և գործում են բարեգործութիւններ։ Բայց դեռ շատ գումարի կարօտութիւն կայ շինութիւնների, տնային անասունների համար և նոյնպէս ձմեռւայ ընթացքում կերակրը ւելու և քիչ ցանք անելու համար։»

—

Քանարագեաղից էլ գանգատներ են հասնում Դավրէժի դպրոցների վիճակախաղութեան մասին։ Պ. Դ. Պողոսեանցը մեզ գրում է. «Մեզ վրայ ծախւած են հարիւրներով Դավրէժի դպրոցի վիճակախաղութեան տոմսակներ. մինչև այսօր սպասեցինք և տեսնում ենք որ ոչ մի լուր չը կայ. այդպիսի խաբեբայութիւն չէինք սպասիլ Դավրէժի դպրոցի այն հոգաբարձուներից, որոնք ստորագրել են տոմսերի տակը. քանիցս գիմել ենք, լուր չը կայ։ Այժմ բացարձակ յայտնում ենք որ կամ վիճակախաղութեան մասին թող մեզ լուր տան և կամ թէ թող մեր փողերը ետ տան»։ Նոյնատեսակ գանգատներ հասնում են մեզ ամեն կողմից, մինչև իսկ օտարականներից։ Այդ ինչ անբացատրելի լռութիւն է որ պահպանում են վիճակախաղի ձեռնարկողները։

—

Ուրախ ենք որ Թէհրանի մեր բողոքական եղբայրները նոյն տեսակ և գուցէ աւելի ջերմ զգացումներով են վերաբերում դէպի մեր և իրենց հեռաւոր տառապող եղբայրները։ Մեզ յայտնում են որ նրանք չեն մոռանում այդ թշւառներին իրենց աղօթքների, ցանկութիւնների և բարեմաղթութիւնների մէջ և ցոյց են տալիս, որ չը նայելով թէ կրօնով տարբեր, սակայն սրտով հայեր են։ Այդ այդպէս էլ պէտք է. ուրիշ է կրօն՝ ուրիշ ազգութիւն. կրօնի տարբերութիւնը չէ առաջացնում ազգութեան և նրա շահերի տարբերութիւն։

—

Մեզ գրում են որ անգլիական բանկի դիրեկտոր Բարինոն մի ամսից յետոյ Թէհրան կը հասնի իր նախկին իրաւունքները վերստացած։

—

Թէհրան է հասել Sir Thomas Gordon-ը—Լոնդոնի բանկի վարչութեան անդամներից մէկը, որ եկել է Վեհ. Շահին յայտնելու թէ սուտ է միանգամայն այն լուրը որ իբր թէ անգլ. բանկը դրամական արժէքների բարձրանալու պատճառով կորուստի ենթարկւելով, ուզում է հաւաքել իր գործերը Պարսկաստանից և որ բանկը ընդհակառակն, իր գործերն աւելի ընդարձակելու է։

—

Լոնդոնի լրագիրները յայտնում են, որ Նուբար-փաշան Լոնդոնի «Հայկական ֆոնդին» է նւիրել 4000 րուբլի։ (Մշակ)

—

Կ. Պոլսի թերթերը պաշտօնապէս ծանուցանում են Շաքիր փաշայի Հայաստան դնալու մասին այս կերպով. «Անատօլուի կայսերական կուսակալութիւնները քննելու պաշտօնին կոչւած Շաքիր փաշային կիրակի օր Պօլիսէն մեկնած ըլլալը կը ծանուցփ»։

—

Մեր թերթի անցեալ համարի վերջին հեռագրի մէջ սպրտել է մի սխալ։ Գրւած է «կարծիք կայ որ նոր ճնշում է գործ դրելու... և այլն։ Պիտի լինի «հաւանական է որ մի նոր ճնշում... և այլն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Հաճախ ասել ենք որ Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթը, որ ունի մի շատ համակրելի ուղղութիւն, սկսել է տալ ճիշտ նպատակին ծառայող առաջնորդողներ, որոնցից ոմանք իրենց բովանդակութեամբ հրաւիրում են ուշադրութիւն։ Այդպիսի առաջնորդողներից մէկն է № 1242-ում «Աղան» վերնագրով, Ն. Բաշալեանի յօդւածը որ սկսում է այսպիսի խօսքերով։

«Աղան այն ագէտ, ունեւոր, ազդեցիկ, ամբարտաւան ու գձուձ տիպարն է որ մեր մէջ ամեն տեղ, հանրային գործին գլուխը անցած, դպրոցին, եկեղեցին, վանքին վարչութիւնը իր ձեռքն առած, իր բովանդակ ծանրութեան տակ կը խեղտէ ամեն շարժում դէպի բարւոքումը. փոփոխութեան, յառաջադիմութեան բոլոր փորձերը կը խափանէ և ամեն միջոցներով կ'աշխատի մշտնջենաւորել վիճակը, ուր իր անձնական շահը և տնապարծութիւն գոհացումներ կը գտնէ»...

Այս կտորը թող ուշադրութեամբ կարդան ռաշտեցիք, քանի որ այդպիսի գձուձ ու տնապարծ աղաներից մի քանի հատ ունեն, որոնք հանրային գործի գլուխն անցած, խեղտում են ամեն շարժում դէպի բարւոքումը...

Բայց հարկաւոր է որ պարսկահայ ընթերցողն էլ կարողանայ տեսնել աղայի այն չքեղ պատկերացումը որ արտադրել է այնքան ճշտութեամբ պ. Ն. Բաշալեանը։ Հարկաւոր է, որովհետև պարսկահայերը ամեն տեղ ունեն գանազան Ծատուր ու Աղաւել աղաներ, որոնք իրենց գձուձ շահերի համար խափանում են յառաջդիմութեան փորձերը և խափանելու համար գործ են դնում ամեն կեղտոտ միջոց։

«Ոչ—շատ-շատ երկար չէ, բայց ամենևին ոչ էլ կարճ ժամանակ է անցել այն օրից, երբ ես ինձ համարում էի ամենաերջանիկ մարդը աշխարհում: Ես ունեի ամենագեղեցիկ կինը, ամենաքաղցր ընտանիքը, ամենաանկեղծ ընկերները: Ես ապրում էի ամենահարուստ ու ամենաազատ կյանքով: Ես ունեի ամենաանհոգ ու ամենաերջանիկ ժամանակը: Ես ունեի ամենաանհոգ ու ամենաերջանիկ ժամանակը: Ես ունեի ամենաանհոգ ու ամենաերջանիկ ժամանակը:

«